

**Հիմա մենք գիտությունը թերսուցում ենք և իրենից աշխարհի բոլոր հնարավոր բաներն ուզում ենք**



Հայաստանում գիտության արդյունավետության մասին անընդհատ խոսելը տեղին չէ, երբ ոլորտի ֆինանսական հատկացումները կլինեն համապատասխան մակարդակի, այն ժամանակ արդյունավետությունից կարելի է խոսել: Այս մասին Ազգային ժողովում 2021 թվականի բյուջեի նախագծի քննարկման ժամանակ ասաց ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը: Նա անդրադարձավ Հայաստանում գիտության ոլորտի արդյունավետության վերաբերյալ հարցին՝ հարցադրում անելով՝ գիտությունից մեր ակնկալիքը ո՞րն է:

«Եթե մենք գիտությունից Բայրաքթար կամ Հերմես ԱԹՄ-ներ ենք ակնկալում, դա սխալ է, որովհետև դա համապատասխան կազմակերպությունները պետք է արտադրեն: Գիտությունը գիտելիքներ է տալիս դրանք արտադրելու ունակություն ունեցող մարդկանց: Մնացածը տնտեսության կառուցվածքից է գալիս, թե այդ գիտելիքը կիրառվելու է, թե ոչ: Ես չեմ կարծում, որ աշխարհում որևէ գիտական կազմակերպությունում ԱԹՄ-ներ են արտադրում կամ դեղեր», - նշեց Հայոցյանը:

Նա ասաց՝ զլոբալ ինովացիոն ինդեքսում Հայաստանի գիտությունն իր գիտական պրոդուկտով 18-րդ տեղում է՝ ավելի քան 140 երկրներում, այնինչ, գիտության ֆինանսավորման մակարդակով 86-րդ տեղում է: «Գլոբալ մրցունակության ինդեքսով 100 միավորից մենք ունենք 1,2 միավոր ֆինանսավորման մակարդակով, իսկ 75,5 միավոր գիտական պրոդուկտի առումով», - հավելեց Հայոցյանը:

Ըստ նրա՝ այսինքն՝ Հայաստանում գիտությունն արդյունավետ է իրեն հատկացված ֆինանսավորման շրջանակներում: Բացեր շատ կան, բայց դրանք «ես չեմ կարծում, որ այն ծակերն են, որոնց մեջ ինչքան ջուր լցնես, գնալու է կորի»:

Ինչ վերաբերում է ոլորտի խնդիրներին՝ նա ասաց, որ այսօր ունենք 70 և ավելի տոկոս գիտական ղեկավար պաշտոն զբաղեցնող մարդիկ, որոնք 65-ից բարձր տարիքի են: «Այսինքն՝ կորոնավիրուսի համավարակը հաշվի առնելով՝ մենք այսօր խնդիր ունենք անգամ այդ ղեկավարների ինստիտուտը պահելու հարցում: Մեզ մոտ ամեն տարի 100-ից ավելի մարդ այդ պաշտոններում մահանում է: Եվ փոխարինող է պետք, իսկ խնդիրը զուտ ֆինանսական է: Գիտության արդյունավետության մասին անընդհատ խոսելը դեռևս տեղին չէ: Երբ հատկացումները կլինեն համապատասխան մակարդակի, այն ժամանակ արդյունավետությունից կարելի է խոսել: Հիմա մենք համակարգը թերստուցում ենք և իրենից աշխարհի բոլոր հնարավոր բաներն ուզում ենք»,- նշեց նա:

Հայոցյանը նշեց, որ հույս ունի՝ հնարավորություն կլինի հաջորդ տարվա բյուջեում գիտության ուղղված գումարները ավելացնել: «Մենք մտածում էինք պահպանեինք նախորդ տարվա տրամաբանությունը, սակայն այս իրավիճակը բերեց նրան, որ բազային ֆինանսավորման մեջ փոփոխություններ պետք է արվեն»,- հավելեց նա: